

causes occurrence, growth, a break and decomposition of civilisations.

It is shown also that according to A. J. Toynbee, a basis and a motive for peaceful and harmonious coexistence of modern civilisations is "the expansion of the western civilisation".

ՀԱՄՔԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՐՅԵՍԱՎՈՐՆԵՐԻ ՇԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

Լ. Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի հայցորդ,
ԿԳՆ ԿԱԻ Կոտայքի մասնաճյուղի գլխավոր մասնագետ,
պատմության և հասարակագիտության մեթոդիստ

Ժողովրդավարության ուղին որդեգրած երկրներում իշխանություն-հասարակություն կապի ձևավորմանն ու երկխոսությանն է ուղղված պետության մեջ տարրաբույթ քաղաքական և սոցիալական ինստիտուտների կայացումը: Դրանք հնարավորություն են տալիս հանրային ինստիտուտներին ներգրավվելու հանրային կառավարմանը:

Դիտարկենք արիեսատակցական միությունների դերն ու նշանակությունը հասարակության կյանքում:

Այս համատեքստում հետաքրքիր զարգացում են ապրել հայ հասարակությունը, սոցիալական համակարգը: Արիմիությունների առաջացումը էապես կապված էր հասարակության մեջ արդյունաբերական հարաբերությունների զարգացման հետ, որոնք պաշտպանում էին աշխատողների շահերը: Իրենց իրավունքների պաշտպանության համար աշխատողները ստեղծում էին արիմիություններ, որոնք գործում էին պետական իշխանությունից անկախ և հետևուն, որ չունահարվեն աշխատողների իրավունքները:

Ժամանակակից հասարակություններում, հատկապես Արևմուտքում, որտեղ դասական իմաստով ձևավորվում է քաղաքացիական հասարակություն, արիմիությունների դերը նշանակալից ¹:

Ժամանակակից արևմտյան երկրների արիմիությունների և քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտների փորձի հաշվառման՝ դիտարկենք հայրենական արիմիությունների նախատիպն ու դրանց կառուցվածքը:

¹ Ավելի մանրամասն տե՛ս **Ալեքսանյան Ա.** Գործընկերությունը քաղաքացիական սոցիալական պատասխանատվության համակարգում // Բանբեր Երևանի համալսարանի, Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, 2010, N 132.6, էջ 24-36; **Շույնի**՝ Սոցիալական գործընկերության հարցի շուրջ // Բանբեր Երևանի համալսարանի, Սոցիոլոգիա, տնտեսագիտություն/, 2010, N 132.5, էջ 5-14, **Շույնի**՝ Ենթադրիրդային արիմետական միությունները քաղաքացիական ժողովրդականության գործոն // Գիտաժողովի նյութեր: Երևան, ԼՂՀ ԿԳ, Ս. Մաշտոց համալսարան, 2011, էջ 20-29:

Հայաստանում արհմիությունները ձևավորվել են դեռևս 1905-1907 թթ-ին և գործել են Խորհրդային Միության գոյության ամբողջ ժամանակահատվածում: Խորհրդային կարգերի փլուզումից հետո նոր քաղաքական ռեժիմի ձևավորմանը զուգընթաց տեղի ունեցան արմատական փոփոխություններ: Դրանք հասարակական կյանքի տարբեր ոլորտներում բարեփոխումներ կատարելու անհրաժշտությունից բխող գործընթացներ էին, որոնք անհրաժեշտ են ժողովրդավարացման ուղին բռնած երկրներում քաղաքացիական հասարակության կայացման համար: Այդ փոփոխություններն անդրադարձան նաև արհմիութենական համակարգի և նրա գործունեության վրա:

Պետականության բացակայությունը և երկար տարիներ օտար լժի տակ գյատելելը իրենց հետքն են թողել հայ ժողովրդի մտածելակերպի և աշխարհայցքի վրա: Սա է այն պատճառը, որ այսօր շատ հաճախ ստիպում է մեր հասարակությանը առնչվել լուրջ խնդիրների հետ (որոշումների ինքնուրույն ընդունում, գենդերային հիմնախնդիրներ, ընտրություններ և այլն):

Հայ ժողովուրդը հնում ունեցել է սոցիալական դասեր, Կորիծավորաց եղբայրություններ, որոնք ունեցել են հստակ նպատակ՝ հասարակությանը տալ լիարժեք, առողջ, խիզախ, խելացի սերունդ²:

Այս կազմակերպությունները հայ իրականության մեջ կոչվել են «Թուխ մանուկներ»³:

Միության ներկայացուցիչներն ակտիվ դերակատարում են ունեցել բնակչության հասարակական կյանքում՝ հոգևոր-մշակութային ոլորտից մինչև երկրի պաշտպանություն:

«Թուխ մանուկների» ինստիտուտը, ըստ էության, հիմք է հանդիսացել միջնադարյան Հայաստանի մեկ այլ սոցիալ-հասարակական կառույցի՝ համբարության ստեղծման համար:

Արիեստավորները, ովքեր իրենց ստեղծած ապրանքի ազատ վաճառողն էին համարվում, միշտ էլ որոշակի արտօնություններ են ունեցել հասարակության այլ շերտերի համեմատությամբ: Տարբեր երկրներում և պատմական տարբեր ժամանակահատվածներում կան վկայություններ, որ նրանք այնուամենայնիվ ֆեռազարդություն ունենալու համար, իշխանների և վաշխառուների կողմից ենթարկվել են շահագործման⁴:

Օրինաչափորեն անհրաժշտություն առաջացավ միասնական պայքար մղելու կեղեքիչների դեմ, ահա այս պայմաններում էլ ստեղծվեցին համբարությունները՝ որպես արհմիությունների նախատիպ:

Ըստ աղբյուրների՝ 9-14 դդ-ում Պարսկաստանում և Փոքր Ասիայի այլ երկրներում արդեն գործում էին համբարական կազմակերպությունները, որոնց հետ ակտիվ առևտրային հարաբերություններ են ունեցել նաև Հայաստանի արիես-

² Տե՛ս **Մանաւականյան Ա. Շ.** «Թուխ մանուկ» հուշարձանների մասին. Պատմա-բանասիրական հանդես, Եր., 2001, N 2, էջ 189-204:

³ Տե՛ս **Հմայակյան Յ.** «Թուխ մանուկների» պաշտամունքը և միջնադարյան Հայաստանի արիեստակցական միությունները», //ՀՀ ԳԱԱ Արևելագիտ. ին-տ, Հոդվ. ժողով. Մերձավոր Արևելք (III): Պատմություն, քաղաքականություն, մշակույթ, Երևան, 2006, էջ 18 :

⁴ Տե՛ս **Արրահամյան Վ.** Արիեստները և համբարական կազմակերպությունները Հայաստանում IX-XIII դդ-ում, Երևան, 1946, էջ 122:

տավորները: Նույն պատմական ժամանակահատվածում Հայաստանի գլխավոր քաղաքներում՝ Դվինում, Անիում, Կարսում և այլուր, նույնպես գոյություն ունեին նման կազմակերպություններ: Այս փաստը ևս մեկ անգամ ապացուցվում է Վարդան Ազգեցու առակներով, Ներսես Շնորհալու, Միսիթար Գոշի, հայ պատմիչների գործերով, որոնք կարևոր տեղեկություններ են հաղորդում համբարական կազմակերպությունների և տվյալ ժամանակի արհեստավորական խնբերի փոխհարաբերությունների, իրավական կանոնների, սոցիալական հարաբերությունների մասին:

Միսիթար Գոշի առակներից մեկում պղնձագործի միջև վեճ է առաջանում, որի լուծման համար վարպետները դիմում են ծերերի ատյան⁵: Ծերերի ատյանը քաղկացած էր 12 ժեր վարպետներից, որոնք լուծում էին միջիամբարային խնդիրները և պաշտպանում նրանց շահերը քաղաքային իշխանությունների առաջ⁶:

Ինչպես իրավացիորեն նկատում է Վ. Արքահամյանը, «Եթե այդ ինստիտուտը՝ «ծերերի ատյանը», գոյություն է ունեցել Հայաստանի քաղաքներում, ուրեմն համբարական կազմակերպությունների փաստն անհերքելի է»⁷:

Ակադեմիկոս Յակոբ Մանանյանը միջնադարյան քաղաքներին և արհեստներին վերաբերող ուսումնասիրություններում նշում է, որ Բագրատունիների ժամանակ Հայաստանում, ինչպես նաև Բյուզանդական կայսրության և խալիֆաթի քաղաքներում գոյություն ունեին արհեստավորների քաղեր, դասեր և համբարական միություններ: Իր մեկ այլ աշխատության մեջ, անդրադառնալով համբարությունների հարցին, նա շեշտում է, որ դրանց ծագումը ավելի հին է, որ նրանք գոյություն են ունեցել մինչ Բագրատունիների Հայաստանը, շատ ավելի հին ժամանակներում⁸:

Ս. Եղիազարովը 19-րդ դարի էնաֆությունների մասին գրում է, որ դրանց արմատները պետք է փնտրել 13-14-րդ դարերում⁹:

Ա. Յակուբովսկին իր «Ֆեդերալիոս օբիցետո Սրедней Азии и его торговые связи с Восточным Европой в X-XV вв.» աշխատությունում նշում է, որ «Հազիվ թէ կարելի է տարակուսել այն հարցում, որ Միջին Ասիայի արհեստավորները 10-րդ դարում արդեն միավորված էին համբարությունների մեջ»¹⁰, այնուհետև, շարունակելով միտքը, նա նշում է 10-րդ դարասկզբում Լևոն Իմաստունի Էղիկոտուն հիշատակված առևտրականների և արհեստավորների 22 միության և համբարության մասին:

⁵ Տե՛ս **Արքահամյան Վ.** Արհեստները Հայաստանում IV-XVIII դդ-ում, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակություն, Երևան, 1956, էջ 243:

⁶ Ավելի մանրամասն տե՛ս **Առաքելյան Բ.** Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, 2-րդ հատոր, Երևան, 1964:

⁷ Տե՛ս **Արքահամյան Վ.** Արհեստները և համբարական կազմակերպությունները Հայաստանում IX-XIII դդ-ում, Երևան, 1946, էջ 136:

⁸ Տե՛ս **Մանանյան Յ.** Հայաստանի քաղաքները 10-11-րդ դարերում, էջ 27:

⁹ Ավելի մանրամասն տե՛ս **Егизаров С. А.** Исследования по истории учреждений в Закавказье, часть 2, Городские Цехи, Казань, 1891:

¹⁰ Տե՛ս **Якубовский А.** Федеральное общество Средней Азии и его торговые связи с Восточной Европой в X-XV вв., էջ 5:

14-րդ դարի պատմիչ Իբն-Բատուտան իր աշխատությունում գրել է, որ պատմական Հայաստանի տարածքում (նաև Ավագում) նա հանդիպել է Երիտասարդ արհեստավորների հետ, որոնք, ինչպես նշում է պատմիչը, «թեպետ իրենց միությունը կազմել էին միևնույն արհեստի, արտադրության հիման վրա, սակայն իրենց գործունեության ընթացքում շատ հեռու էին գնացել մասնագիտական և արհեստավորական խնդիրներից, դարձել էին հասարակական ուժ, խառնվում էին հասարակության քաղաքական կյանքին և հաճախ չհանդուրժելով անարդարությունները՝ ... հանաւ կոհկներ էին մղում անհաճելի իշխանությունների դեմ»¹¹:

Հայաստանում համքարությունները ամենայն հավանականությամբ ծևավորվել են 9-10-րդ դարերում (Դվինում՝ 9-րդ դարում, Անիում, Կարսում և այլ զարգացած քաղաքներում՝ 10-րդ դարից ոչ շուտ¹²):

Ակադեմիկոս Ր. Մանանյանը իր «Օ տօրցու և գործաքանությունների աշխատության մեջ անդրադառնալով արհեստավորական միություններին՝ գրում է. «Արհեստավորական կազմակերպությունները գոյություն են ունեցել Բագրատունիների շրջանի թե՛ Բյուզանդիական կայսրության, թե՛ Խալիֆայության Ենթակա քաղաքներում»¹³:

Ինչպես Եվրոպական շատ երկրներում, այնպես էլ Հայաստանում, համքարությունների (ազգային յուրօնինակ արհմիությունների) առաջացունը պայմանավորված էր ֆեոդալական քաղաքի արտադրական և սոցիալական հարաբերություններով: ճնշված արհեստավորների կազմակերպությունները գործուն էին շահագործող ֆեոդալների դեմ և նպատակ ունեին պաշտպանելու և իրենց շահերը, և իրենց կողմից ստեղծված բարիքը ֆեոդալների ոտնձգություններից:

Հայտնի է, որ 18-19-րդ դարերում արհեստավորական կազմակերպությունները Արևմտյան Հայաստանում կոչվել են էսնաֆություններ, իսկ Արևելյան Հայաստանում՝ համքարություններ: Սակայն նրանք իրենց գրավոր կանոնագրերի մեջ շարունակում են պահպանել «Եղբայրություն» անվանումը: Այս կազմակերպություններին բնորոշ էին կանոնակարգերը, որոնք ամրագրում էին բոլոր անդամների պարտականություններն ու իրավունքները, անդամավճարի և կամավոր անդամակցության սկզբունքները:

Կանոնակարգերից բացի, արհեստավորական միությունները ղեկավարվել են նաև ազգային ավանդույթներով և սովորույթներով, ինչի մասին է վկայում 19-րդ դարի I կեսին պատկանող «Կանոն ոսկերիչ արհեստավորաց» փաստաթուրը¹⁴, ուր կարևորվում է նաև սեփական շենք ունենալու անհրաժեշտությունը, որտեղ ժամանակ առ ժամանակ պետք է գումարվեին ժողովներ¹⁵:

¹¹ Տե՛ս՝ **Արրահամյան Վ.** Արհեստները և համքարական կազմակերպությունները Հայաստանում IX-XIII դդ.-ում», Երևան, 1946, էջ 125:

¹² Տե՛ս՝ **Առաքելյան Բ.** Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, 2-րդ հատոր, Երևան, 1964, էջ 180:

¹³ Տե՛ս՝ **Մանուկյան Ա.** Օ տօրցու և գործաքանությունների աշխատությունների մասին պատմությունը, 1930, էջ 165:

¹⁴ Այս կանոնագիրը բաղկացած է 34 հոդվածից// գիրք Ա: «Լումա», Տփղիս, 1898:

¹⁵ Տե՛ս՝ **Արրահամյան Վ.** Արհեստները Հայաստանում IV-XVIII դդ.-ում, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան 1956, էջ 246:

1280 թ-ի Երզնկայի եղբայրության կանոնադրության հայտնաբերումը պատմաբան Լ. Խաչիկյանի կողմից շատ հարցերում լուս սփռեց միության ներսում եղած հարաբերությունների վրա: Ուսումնասիրելով փաստաթուղթը՝ Խաչիկյանը գրում է. «Ծարադրված տվյալներով, որքան էլ դրանք սուր և ակնարկային լինեն, թվում է, թե կարելի է ապացուցված համարել, որ դեռևս 12-րդ դարում Հայաստանի քաղաքներում կային կազմակերպություններ, որոնք միավորում էին քաղաքի արհեստավորական և առևտրական շերտերին, կազմակերպում էին պայքար ընդդեմ «բռնավորների», օգնում էին տնտեսապես թույլ ընկերոջը, գորավիզ էին լինում միմյանց քաղաքական, հասարակական և տնտեսական գործունեության բոլոր բնագավառներում: Նրանք միաժամանակ նաև կարևոր դեր էին խաղում որպես գինված ուժ»¹⁶:

Անհրաժեշտ է նշել արհեստավորական միությունների և համբարությունների կարևոր ներք նաև քաղաքների պաշտպանության գործում: Նրանք ոչ միայն ամենախոշոր մասնակցությունն էին ցուցաբերում քաղաքների, պարիսապների ամրապնդման գործում, այլ նաև անհրաժեշտության դեպքում արտադրում էին պահանջվող գենքը, քաղաքը պահպանող գորբերի հետ միասին հանդիսանում էին այն ուժը, որը վճռական դեր էր կատարում քաղաքների պաշտպանության գործում՝ թե տեղական և թե հատկապես օտար ֆեոդալների ու ռազմական ջոկատների պարբերական ասպատակություններից:

Համբարությունները որպես հասարարական ուժ՝ հակադրվում էին ֆեոդալներին և նրանց ձեռքին գործիք դարձած իշխանություններին, պայքարում էին արհեստավորների շահերի պաշտպանության համար՝ ծերերի ատյանի հետ միասին կատարելով ժամանակակից արևմտյան երկրների կայացած արհմիությունների դերը:

Համբարությունները դեր են ունեցել նաև ժողովրդի մեջ առաջավոր գաղափարներ տարածելու, հակասաղանդավորական և հակաֆեոդալական տրամադրություններ ձևավորելու գործում:

Նրանց նշանակությունը հաշվի առնելով՝ երբեմն «վերևները» հարկադրված էին լինում հաշվի նստել նրանց հետ՝ իրեն ժողովրդի մեջ գործող կարող ուժ՝¹⁷, իսկ երկխոսության գնալը արդեն իսկ փաստում է կայացած հասարակական ուժի մասին:

Նշված կազմակերպությունների գործումներության շրջանակներից կարելի է եզրակացնել, որ թե համբարությունները, թե էսնաֆությունները հասարակական կարևոր նշանակություն ունեցող սոցիալական ինստիտուտներ էին, որոնք դեր ունեին ոչ միայն հասարակության տնտեսական, կենցաղային հիմնախնդիրները լուծելու գործում, այլև ձևավորում էին պայքարի ոգի, ստեղծում հասարակական արժեքներ, տարածում առաջադեմ գաղափարներ: Նրանց շնորհիվ հատկապես զարգացավ արդյունաբերությունն ու առևտուրը, ինչը առաջընթացի ազդակ դարձավ սոցիալական կյանքի բոլոր բնագավառներում:

Այսպիսով, համբարությունները կարող ենք դիտել իրեն արհեստավորական

¹⁶ Տե՛ս **Խաչիկյան Լ.** Երզնկա քաղաքի եղբայր միության կանոնադրություն // Բանքեր Մատենադարանի, 1962, N 6, էջ 365-377: // Առաջնի ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» // Հասարակական գիտություններ // 1951թ., N 12, էջ 77:

¹⁷ Տե՛ս **Առաքելյան Բ.** Նշված աշխ., էջ 202:

կազմակերպությունների՝ արհմիությունների նախատիպեր, որոնք ուղղված էին շահագործող ֆեռդալների դեմ և նպատակ ունեին պաշտպանելու իրենց՝ արեստավորների շահերը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մինչև 19-րդ դարը համբարություններն օգտագործել են դեռևս 11-րդ դարի կանոնադրությունները՝ կատարելով միայն մասնակի փոփոխություններ, ինչն էլ վկայում է դրանց պիտանելիության մասին:

Ժամանակակից հայրենական արհմիությունները, թեև «դեյուրե» գործում են և դրանցում անդամակցությունը կրում է կամավոր բնույթ, սակայն փաստացի այդ գործունեությունը արդյունավետ չէ: Խնդիրն այն է, որ արհմիությունները պետք է գործնեն պետական իշխանություններից անկախ և պաշտպանեն աշխատողի շահերը, ինչն, ըստ Էռլեյան, մեր դեպքում հաճախ տեղի չի ունենում /օրինակ՝ 2012-13 թթ. «Լահիջիտ» ընկերության աշխատակիցների բողոքի ակցիաները կրում են տարերային, ոչ համակարգված բնույթ և չունեն փաստացի դեկավար/: Արհմիությունների թերի գործունեությունն ակնառու է այն դեպքում, եթե կառավարության կամ գործատունների միջև չի ձևավորվում կառուցողական երկխոսություն:

Ժողովրդավարական հասարակության ձևավորման համար անհրաժեշտ են սոցիալական տարբեր խավերի ներկայացուցիչների համագործակցություն, իրավունքի գերակայություն և օրենքի առջև բոլորի հավասարություն:

Այս դեպքում կապահովվի սոցիալական ինստիտուտների ներդաշնակ փոխանական աջակցությունը պետական իշխանության օղակների հետ, ինչպես նաև կայուն հիմք կստեղծվի հասարակության զարգացման ու առաջընթացի համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Արքահամյան Վ.** Արհեստները և համբարական կազմակերպությունները Հայաստանում IX-XIII դդ.-ում, Երևան, 1946:
2. **Արքահամյան Վ.** Արհեստները Հայաստանում IV-XVIII դդ.-ում, Երևան, 1956:
3. **Ալեքսանյան Ա.** Գործընկերությունը քաղաքացիական սոցիալական պատասխանատվության համակարգում, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 2010:
4. **Առաքելյան Բ.** Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, 2-րդ հատոր, Երևան, 1964:
5. «Լումա», Գիրք Ա, Տիգրիս, 1898:
6. **Խաչիկյան Լ.** «Երզնկա քաղաքի եղբարց միության կանոնադրություն», Բանբեր Մատենադարանի, N6, Երևան, 1962:
7. **Յմայակյան Յ.** ««Թուխ մանուկների» պաշտամունքը և միջնադարյան Հայաստանի արհեստական միությունները», ՀՀ ԳԱԱ Արևելագիտ. ին-տ, Յոդվ. ժող.: Մերձավոր Արևելք (III): Պատմություն, քաղաքականություն, մշակույթ, Երևան, 2006:
8. **Սահանդյան Յ.** Հայաստանի քաղաքները 10-11-րդ դարերում, ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիա, Հայկական ֆիլիալ: Պատմության և հնագիտության ին-տ, Եր.: ԱրմՖԱՆԻ հրատ., 1940:
9. **Մնացականյան Ա. Շ.** «Թուխ մանուկ» հուշարձանների մասին, Պատմա-քանասիրական հանդես, Եր., 2001:
10. **Եղիազարօս Հ. Ա.** Исследования по истории учреждений в Закавказье, часть 2, Городские Цехи, Казань, 1891:
11. **Մանադյան Ա.** О торговле и городах Армении. Эривань, 1930:

АРТЕЛИ КАК ИНСТИТУТ ЗАЩИТЫ ИНТЕРЕСОВ РЕМЕСЛЕННИКОВ

L. S. STEPANYAN

В современном мире все чаще ставится акцент на роли и значении гражданского общества. Институты гражданского общества играют важнейшую роль в решении социальных проблем. Следует отметить особую роль общественных организаций и профсоюзов. В этом контексте необходимо обратить внимание на деятельность амкаров в средневековой Армении. Зачастую границы деятельности этих союзов совпадают с деятельностью общественных организаций, что способствует созданию особых общественного слоя, играющего активную роль в общественной и политической жизни граждан.

LABOUR UNIONS AS AN OF PRETECTION OF LABOURORS' RIGHTS

L. S. STEPANYAN

Nowadays modern society states the importance of civil society rather than democracy. The institutions of civil society play a great role in solving social problem . Among the structures of civil society social organizations and trade unions are more active. It is important to note that in this context the role of labour unions is evident in medieval Armenia. The activity of such labour unions are inseperably linked with the activity of social organizations, which tends to create a specific social layer.